

Հայերը «50»-ի պրոցեսում

Գանիելյան Մկրտիչ Դ.

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ.գ.թ. (Երևան, ՀՀ)
mdaniely@mail.ru

ՀՏԳ՝ 93/94; EDN: JJDAPB;

DOI: 10.58587/18292437-2023.6-54

Հանգուցաբառեր՝ Ստեփան Ղարղաշյան, Եկատերինա Թումանովա, հեղափոխական նարողնիկություն, պրոպագանդա, բանտարկություն, դատավարություն, արքայ, տաժանակրություն

Армяне в «процессе 50-ти»

Даниелян Мкртич Д.

Старший научный сотрудник, кандидат исторических наук
Институт истории НАН РА (Ереван, РА)

Аннотация. Русское революционное народническое движение оставило огромный след в истории общественно-политической жизни Российской империи 70-80-х годов XIX века. Это движение распространилось не только в метрополии, но и на национальных окраинах империи, в том числе и в восточно-армянской действительности. Представители армянской интеллигенции и молодежи приняли активное участие в этом движении, распространяя среди армянской общины идеи революционного народничества.

Царское правительство преследовало участников этого движения в начале 70-х годов XIX века. Одним из громких дел против народничества стал «Суд 50» над членами «Всероссийской социально-революционной организации». По этому делу также были осуждены армянские члены этой организации Степан Кардашьян и Екатерина Туманова. Своей деятельностью они способствовали распространению идеологии революционного народничества в Закавказье и в армянской действительности.

Ключевые слова: Степан Кардашьян, Екатерина Туманова, революционное народничество, пропаганда, арест, судебный процесс, ссылка, каторга

The Armenians in the «Process of 50»

Danielyan Mkrtych D.

Senior Resarcher, Candidate of Historical Scanse
Institut of History of NAS RA (Yerevan, RA)

Abstract. The Russian revolutionary populist movement left a huge mark on the history of the socio-political life of the Russian Empire in the 70-80s of the 19th century. This movement spread not only in the metropolis but also in the national outskirts of the empire including the Eastern Armenian reality. Representatives of the Armenian intellectuals and youth took an active part in this movement spreading the ideas of revolutionary populism among the Armenian community.

The tsarist government persecuted the participants in this movement in the early 70s of the 19th century. One of the high-profile cases against populism was the “Trial of 50” over members of the “All-Russian Social Revolutionary Organization”. Armenian members of the organization Stepan Kardashian and Ekaterina Tumanova were also convicted in this case. Through their activities, they contributed to the spread of the ideology of revolutionary populism in Transcaucasia and in Armenian reality.

Keywords: Stepan Kardashyan, Ekaterina Tumanova, revolutionary populism, propaganda, arrest, trial, link, hard work

19-րդ դարի 70-80-ական թվականներին Ռուսական կայսրության հասարակական-քաղաքական կյանքում գերիշխող դիրք ուներ հեղափոխական նարողնիկական շարժումը: Արտահայտելով ռուս դեմոկրատիայի նպատակները հանուն գյուղացու հողի և ազատության, այս շարժումը տարածում գտավ ազգային ծայրամաստրում, այդ թվում արևելահայ իրականության մեջ: Հայ իրականության մեջ նարողնիկական գաղափարների տարածումը պայմանավորեց կարելի է բաժանել երկու փուլի: Առաջին էտապում նարողնիկական գաղափար

բախտությունը ընդունվում էր միօրինակորեն, առանց քննադատական վերլուծության, իսկ երկրորդ էտապում, այն է 19-րդ դարի 80-ական թվականներին, երբ հայկական հարցը դարձավ միջազգային դիվանագիտության քննարկման առարկա, նարողնիկական գաղափարախոսությունը հարմարեցվում էր հայ իրականությունից բխող խնդիրներին և այս ու մյուս գործոնների ազդեցության ներքո ձևավորվեցին հայ ազգային նարողնիկական խմբակները և կազմակերպությունները:

Հեղափոխական նարոդնիկական առաջին կազմակերպություններից մեկը, որի գործունեությանը հայերից մասնակցել են Ստեփան Ղարղաշյանը, Եկատերինա և Հռիփսիմե Թումանովները, Դավիթ Այվազյանը և ուրիշները, «Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպությունն էր, որը հայտնի էր նաև «Մոսկվացիների խմբակ» անվանումով: Հենց այս կազմակերպությունն էր, որի անդամների մեծ մասը ձերբակալվեց և նրանց նկատմամբ հարուցված գործը հայտնի էր «50-ի պրոցես» անվանումով:

«Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպությունը» ձևավորվել էր 1873 թ., ընդ որում նրա մեջ մտան «Ֆրիչ» խմբակը և «Կովկասյան խմբակը»: Բանն այն է, որ Ցյուրիխում ձևավորվել էր Ռուսաստանից այստեղ բարձրագույն կրթություն ստանալու նպատակով եկած ուսանողուհիներից և այս խմբակի վրա մեծ էր նարոդնիկության ազդեցությունը: Հայերից այս խմբակի մեջ մտնում էին Եկատերինա և Հռիփսիմե Թումանովները: Իսկ 1872 թ. Եվրոպայի տարբեր կրթական կենտրոններում սովորող հայ ուսանողները Ցյուրիխում հիմնել էին ազգային խմբակ: Նման խմբակ ունեին նաև վրացի ուսանողները: Ունենալով գաղափարական լայն ընդհանրություն, այս խմբակները 1873 թ. միավորվեցին «Յարմո» անվան տակ: 1874 թ. Ժնևում կովկասցի ուսանողները «Կովկասյան խմբակը» հիմնադրելու նպատակով հրավիրեցին համագումար, որին ակտիվորեն մասնակցեցին Ստեփան Ղարղաշյանը և Դավիթ Այվազյանը, իսկ որպես Հայաստանի ներկայացուցիչ Պ. Ալիբեկյանը Երևանից: Ջաբաղարին հայերից հիշատակում է նաև Պյոտր Մելիքովին և Եկատերինա Մելիքովին [25, էջ 177]: Համագումարի ժամանակ ծրագրային և այլ բնույթի հարցերի քննարկման ժամանակ նրա մասնակիցները բաժանվեցին երկու թևի: Առաջին թևը կողմ էր անջատ պայքարի սկզբունքին, նպատակ ունենալով ստեղծել առանձին պետություն՝ «Կովկասյան Փեդերացիա», իսկ երկրորդ թևը գերադասեց մնալ համառուսաստանյան ընդհանուր պայքարի դիրքերում [25, էջ 179]: Այս թևին հարեցին նաև Ստ. Ղարղաշյանը և Դ. Այվազյանը: 1874 թ. «Կովկասյան խմբակը» միավորվեց «Ֆրիչի. հետև արդյունքում երկու խմբակները մտան «Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպության» մեջ [18, էջեր 57-69; 20, էջեր 19-20]:

Այս կազմակերպության հիմնադիր և ակտիվ անդամներից էր Ստեփան Ղարղաշյանը: Նա ծնվել է 1852 թ. Շամախում: 1864 թ. ընդունվել է Թիֆլիսի մեծնիկների դպրոցը, որը ավարտել է 1871 թ.: Երեք տարի աշխատելուց հետո նա ստանում է կոլեգիական ռեզիստրատորի

աստիճան, իսկ 1874 թ. մեկնում է Մոսկվա, այնուհետև Գերմանիա՝ Դրեզդեն, որտեղ և ընդունվում է տեղի պոլիտեխնիկական ինստիտուտը: Այս ժամանակաշրջանում է, որ նա շփվում է ժամանակի առաջավոր գաղափարներով ուսանողության հետ, որոնցից էին Ս. Բարդինան, Ս. և Ե. Սուբոտաները, Ի. Ջաբաղարին և ուրիշները: Ուշագրավ է, որ Ջաբաղարին Ղարղաշյանին Չեկոիձեի խորհրդով է ընդգրկել խմբակի մեջ, գտնելով, որ խմբակին անհրաժեշտ են նաև տեխնիկական կրթություն ունեցող մարդիկ: Ընդ որում Չեկոիձեն Ջաբաղարուն խորհուրդ էր տալիս Ղարղաշյանին հավաքագրելու համար դիմել նրա ընկերոջը՝ Դավիթ Այվազյանին [25, էջ 192]: Այս անձնավորությունների հետ Ղարղաշյանը մասնակցում է «Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպության» հիմնադրմանը՝ դառնալով նրա գանձապահը և ակտիվ պրոպագանդիստներից մեկը:

1875 թ. փետրվարին արտասահմանից Ռուսաստան վերադարձավ «Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպության» անդամների առաջին խումբը, որի մեջ էին նաև Ստ. Ղարղաշյանը, Ե. և Հ. Թումանով քույրերը [22, էջ 99]: Ղարղաշյանը Չեկոիձեի հետ բնակվում է Շևաղիևի հյուրանոցում ակտիվորեն մասնակցելով կազմակերպության աշխատանքներին [2, թ. 48]: Կազմակերպությունը քարոզական գործունեություն ծավալեց ոչ միայն կենտրոնական նահանգներում, այլև ազգային ծայրամասերում: Ստ. Ղարղաշյանի, Թումանովայի, Ս. Բարդինայի, Գ. Չդանովիչի ջանքերով 1875 թ. Թիֆլիսում հիմնադրվեց առաջին նարոդնիկական կազմակերպություններից մեկը [25, էջեր 175-176; 17, էջ 58]:

«Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպության» գործունեությունը համապատասխանում էր հեղափոխական նարոդնիկների գործունեության այն շրջանին, երբ նրանք, առաջնորդվելով «երթ դեպի ժողովուրդը» կոչով, մեկնում էին գյուղ, կարծելով, թե բավական է մի կայծ, որ արթնացնի ռուս գյուղացուն: Մակայն այս տեսությունը պրակտիկայում հենց սկզբից ցույց տվեց իր սնանկ լինելը: Ռուս գյուղացին ոչ միայն պատրաստ չէր հեղափոխությանը, այլև կասկածանքով էր վերաբերվում գյուղ այցելած նարոդնիկ քարոզիչներին և հաճախ ինքն էր նրանց հանձնում ոստիկանության ձեռքը: Ինքը՝ Ղարղաշյանը, «Մավր» կեղծանունով, պրոպագանդիստական աշխատանքներ էր տանում Մոսկվայում, որպես կազմակերպության գանձապահ կապեր պահպանելով նաև Տուլայի, Օդեսայի, Սարատովի և այլ քաղաքների կազմակերպության անդամ նարոդնիկների հետ [17, էջ 61]:

«Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպության» ակտիվ գործունեությունը բանականաբար այս իրավիճակում չէր կարող իր վրա չբեռնել ցարական ոստիկանության ուշադրությունը: Ոստիկանական Դեպարտամենտը, կարողանալով տեղեկություն ձեռք բերել կազմակերպության գոյության մասին, սկսում է իրականացնել խուզարկություններ և ձերբակալություններ: Արդյունքում 1875 թ. ապրիլի 4-ին Մոսկվայի կազմակերպության գործադիր մարմինը գրեթե ամբողջությամբ ձերբակալվում է [25, էջեր 180-181]: Կազմակերպության գործադիր մարմնի անդամ Ջաբադարու ձերբակալության վերաբերյալ արժեքավոր են Նիկոլայ Գավրիլովի ցուցմունքները: Վերջինս վկայում է, որ կազմակերպության անդամներ Ջաբադարի և Չդանովիչը սերտ կապեր ունեին Կովկասի արմատական տրամադրություններ ունեցող մտավորականության հետ: Գավրիլովը Ջաբադարու և Չդանովիչի ձերբակալության մասին տեղեկանում է Թիֆլիսում՝ բժշկա-վիրաբուժական ակադեմիայի ուսանող Խուդադովից և Վերշանովից 15 [16, էջեր 341-342]: Կազմակերպության անդամներից Միխայիլ Չեկոիձեն նույնպես կապեր ուներ Կովկասի հետ: Նա Աթաբեկովին հասցեագրված նամակում գրում էր «ժողովրդի մեջ հանցագործ բովանդակությամբ գրքեր տարածելու մասին և շեշտում այդ գրքերը Կովկաս ուղարկելու անհրաժեշտությունը» [16, էջ 342]: Հավանական է այն, որ Խուդադովը, Վերշանովը և Աթաբեկովը եղել են, Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպության» կողմից Թիֆլիսում հիմնադրված խմբակի անդամներ:

Ղարդաշյանը և ձերբակալությունից խույս տված կազմակերպության մյուս անդամները մեկնում են նահանգներ և տարբեր քաղաքներ՝ քարոզչական աշխատանք տանելու նպատակով: Նման բարդ իրավիճակում կազմակերպության նոր գաղտնի հանդիպման կենտրոնատեղի հարցը կարողացավ լուծել Ե. Թումանովը [18, էջ 38]:

Ղարդաշյանը քարոզչական գործունեություն է ծավալում նախ Տուլայում և Օրյոլում, այնուհետև անցնում է Օդեսա, որտեղ Միքելաձեի օգնությամբ նա ձեռք է բերում կեղծ անձնագիր իշխան Կոչակիձե անունով և մի քանի անգամ մեկնում արտասահման [19, էջ 39; 8, թ.1]: Արտասահմանում Ղարդաշյանը, ըստ ժանդարներիայի տեղեկությունների, «իրականացրել է արուսազանդիստների էմիսարի պարտականությունները» [1, թ. 7]: Այստեղից նա նամակագրական կապեր էր պահպանում Գեորգի Չդանովիչի, Վերա Լյուբատովիչի և կազմակարպության մյուս անդամների հետ, որոնց անունները, անվան առաջին տառերով նշված էին նրա գրառումների գրքուկում [15, էջ 9]:

1875 թ. հուլիսին Ղարդաշյանը է վերադառնում է Մոսկվա կեղծ անձնագրով [14, էջ 10]: Իր վերադարձի վերաբերյալ Ղարդաշյանը դատական նիստի ժամանակ տվեց հետևյալ բացատրությունը. «1874 թ. հունիսին ես արտասահմանում լուր ստացա այն մասին, որ որպեսզի սպասեմ նամակի: Այնուհետև ես ստացա անանուն մի նամակ, որում խտավում էր այն մասին, որ Չեկոիձեն ձերբակալված է և նա չի խոստովանում, այդ պատճառով նա դիտվում է որպես վտանգավոր հանցագործ: Հարկավոր էր նրան համոզել, որ նա խոստովանի, ընդ որում խորհուրդ էր տրվում դրա համար վերցնել Չեկոիձեի թղթերը, որպեսզի ես նրան ազատեի երաշխավորությամբ: Այդ նպատակով ես ձեռք բերեցի փողեր և եկա Ռուսաստանի հարավային սահմանով, քանի որ հյուսիսում ինձ կարող էին ճանաչել: Անանուն նամակի հեղինակը իշխան Յիցիանովն էր: Պարզվեց, որ իմ վերադառնալն ավելորդ էր, քանի որ Չեկոիձեին չկարողացա համոզել խոստովանել» [16, էջ 299]:

Կարևոր է այն փաստը, որ Ղարդաշյանը Ռուսաստան եկավ Յասսիից, «որտեղից սկսվում էր այն ճանապարհը, որով արտասահմանից գրքեր էին ստանում և որով Չդանովիչը Մոսկվա բերեց գրքերը» [15, էջ 136]:

Դատական նիստի ժամանակ Ղարդաշյանի հայտարարությունը իր հաստատումը գտավ նաև Յիցիանովի ցուցմունքներում, որը վկայեց, որ իրոք Ղարդաշյանը վերադարձել էր Մոսկվա, որպեսզի բանակցություններ սկսի իշխանությունների հետ քաղբանտարկյալին դրամական երաշխավորությամբ ազատելու համար: Սակայն Ղարդաշյանի այս առաքելությունը ավարտվեց անհաջողությամբ [15, էջ 137]:

Այս բոլորից հետո Ղարդաշյանը նորից է փորձում մեկնել արտասահման: Սակայն արտասահմանյան անձնագիր ստանալու համար նա դիմում է ոչ թե Մոսկվայի կամ մոտակակա քաղաքի համապատասխան մարմիններին, այլ այդ նպատակով իշխան Յիցիանովի հետ մեկնում է Օրյոլ: Այստեղ նա հանդիպում է կազմակերպության մեկ այլ անդամի, ըստ ժանդարներիայի ենթադրության, Եվգենի Սուբոտինայի հետ, իսկ այնուհետև ձեռք է բերում արտասահմանյան անձնագիր և վերադառնում է Մոսկվա [14, էջ 137]: Ղարդաշյանի և Յիցիանովի այս ճանապարհաձախարհ իրականացվել էր կազմակերպության ընդհանուր դրամական միջոցների հաշվին, որի մասին վկայում է համապատասխան նշումը Ղարդաշյանի գրառումների գրքուկում: Այստեղ Ղարդաշյանը, «Ուկրաինա» հյորանոցի ծառայող Կիսիլյովի վկայությամբ, հաճախակի է հանդիպել Անտիմոզա Գամկրելիձեի և Վերա Լյուբատովիչի հետ [16, էջ 197]:

Այս շրջանում ակտիվ գործունեություն է ծավալում նաև Ե. Թումանովան: Նա, ըստ

ժանդարմերիայի տվյալների, «*հետաքննության մեջ ներգրավված է որպես կազմակերպության տասը անդամներից մեկը, կազմակերպություն, որ ձևավորվել էր Մոսկվայի, Վլադիվոստոկի, Տուլայի և Կիևի նահանգների գործարանային բնակչության մեջ պրոպագանդա տանելու նպատակով*» [16, էջ 197; 2, թ. 48]: Ժանդարմերիան կարողանում է պարզել, որ արդեն «1875 թ.-ի օգոստոսին Թումանովյան ժամանել է Իվանո-Վոզնեսենսկ և ընդունվել կարի ֆարքիկա որպես բանվորուհի, սկսել է կազմակերպել բանվորների հավաքույթներ, կարդացել է նրանց համար արգելված գրքեր և քննարկել բանվորների և տերերի աշխատավարձերի անարդար ձևերը»: Իվանո-Վոզնեսենսկում Թումանովյան գործում էր կազմակերպության մյուս անդամների հետ և բնակվում էր նրանց հետ մեկ ընդհանուր բնակարանում՝ այսպես կոչված կոմունայում» [12, թ. 1]:

Ժանդարմերիան, ձեռքի տակ ունենալով այս տեղեկությունները, սկսկում է իրականացնել խուզարկություններ: Այսպես. «1875 թ. օգոստոսի 8-ին Վլադիվոստոկի նահանգի ժանդարմական վարչությունում գործակալների հաղորդած տեղեկությունների հիման վրա Կիսինայի բնակարանում կատարվեց խուզարկություն, ընդ որում համառ պայքարից հետո ձերբակալվեցին երեք տղամարդ և երեք կին, վերջիններիս թվում և Գամկրելիձեն (Ե. Թումանովյանի ամուսնական ազգանունը): Ձերբակալության ժամանակ Եկատերինա Թումանովյան ներկայացավ կեղծ անձնագրով, որպես Կուրսկի նահանգի Բելգորոդյան մարզի Նովոսելյան գավառի Միխայլովսկի գյուղի բնակչուհի Օլգա Նիդանովա և ժխտեց իր մասնակցությունը հանցագործ խմբակի աշխատանքներին»:

Սակայն խուզարկության ժամանակ հայտնաբերվեցին կազմակերպության անդամների տարբեր բնույթի գրառումները, որոնց մեջ բազմիցս հիշատակվում էր Թումանովյան անունը: Մյուս կողմից Թումանովյան անձնավորության բացահայտմանը նպաստեցին այն բանվորների ցուցմունքները, որոնք ի դեմս Թումանովյանի, ճանաչեցին այն անձնավորությանը, որը հաճախակի էր այցելում կազմակերպության ընդհանուր բնակարանը և իրենց մոտ տարածում հանցագործ բովանդակությամբ գրքեր [12, թ. 7]:

Թումանովյանի ձերբակալությունից հետո ժանդարմերիան 1875 թ. օգոստոսի 12-ին խուզարկության է ենթարկում «Ուկրաինա» հյուրանոցում բնակվող նրա ամուսնուն՝ Անտիմոզա Գամկրելիձենին: Խուզարկության ժամանակ վերջինիս այցելում է Ստ. Ղարդաշյանը և ձերբակալվում իբրև մի կասկածելի անձնավորություն, որ հնարավոր ինչ-որ առնչություններ կարող էր ունենալ հեղափոխական կազմակերպության հետ: Ձերբակալության ժամանակ Ղարդաշյանը ներկայացավ որպես

իշխան Գեորգի Կոչակիձե և հայտարարեց, որ ինքը հորից որպես ժառանգություն ստացել է 15 հազար ռուբլի և պատրաստվում էր անցնել արտասահման: Մինչ այդ ինքը եղել է Օդեսայում, Խարկովում և Տուլայում: Մոսկվա է եկել այցելելու գիմնազիայի իր ընկերներին, որոնց թվում և Գամկրելիձենին: Ինվ վերաբերվում է 15 հազար ռուբլուն, այն մնացել է իր բնակարանում [2, թ. 36]:

Ղարդաշյանի այս հայտարարությունից հետո նրա բնակարանում խուզարկություն կատարվեց, որի ժամանակ ժանդարմերիան հյատնաբերեց 8545 ռուբլի կանխիկ դրամ, Սոֆիա Թումանովայի (Եկատերինա Թումանովայի մայրը) անունով Պետերբուրգի բանկից ստացված 1100 ռուբլիանոց արժետոմս, գրառումների գրքույկը, որոնցում գրանցված էին կազմակերպության անդամների կատարած ծախսերը և տարբեր բնակարանների բանալիներ: Խուզարկության արդյունքները հիմք հանդիսացան Ղարդաշյանին ձերբակալելու և հարցաքննության ենթարկելու համար [2, թ. 36; 16, էջ 188]:

Ձերբակալվելուց հետո Ղարդաշյանը պետք է բնականաբար քայլեր ձեռնարկեր կապվելու կազմակերպության անդամների հետ և նրանց զգուշացներ հնարավոր վտանգի մասին: Նա փորձում է բանտից ոստիկանության ունտերսպա Դունևի միջոցով երեք նամակ ուղարկել, սակայն վերջինս այդ նամակները հանձնում է ժանդարմական վարչություն: Այդ նամակներից առաջինը հասցեագրված էր կազմակերպության անդամներից Միքելաձենին, որը գտնվում էր Օդեսայում, երկրորդը՝ Աֆոնսկուն և երրորդը՝ Դեբոդեն գերմաներեն լեզվով: Նամակներից առաջին երկուսը ծածկագրված էին, իսկ երրորդ նամակը Ղարդաշյանը ստորագրել էր ոչ թե որպես իշխան Կոչակիձե, այլ իր իսկական ազգանունով [15, էջ 21; 5, թ. 12]:

Առաջին ծածկագրված նամակը Միքելաձենին իր հերթին պետք է հանձներ Չոստովիչին: Այդ նամակում Ղարդաշյանը, նկարագրելով իրավիճակը, գրում էր. «Եթե կարող եք, անհասպող հանձնեք, շիկահերին («շիկահերը» Չոստովիչի կեղծանունն էր): Մոսկվայում ամեն ինչ առգրավվել է, ինչպես նաև փողերը, մոտավորապես տասն հազար ռուբլի վերցվել է: Իսկ առաջիմ ես ներկայացել եմ որպես իշխան Կոչակիձե: Մանչուն երկու անգամ կրակեց սպայի բրա, բայց վրիպեց: Դա շատ լավ է, հակառակ դեպքում դժբախտություն կլիներ: Գամկան, Վերան ես և հավանաբար ուրիշները ձերբակալված են: Զեզ փնտրում են: Գրքերը, թղթերը բռնագրավված են: Դու կարող ես հանդիպել ժանդարմի հետ: Ահա նրա հասցեն՝ ժանդարմական էսկադրոն, ունտեր-սպա Դունև; Նա խոստացել է ամեն ինչ անել: Բողոր թղթերը Մեդվեդիխայի մոտ են, բայց թվում է արդեն

ոչնչացված են: Ընդհանրապես գործերը շատ վատ են: Ես չեմ կարող ապացուցել իմ ինքնությունը: Քո մալիքը և նրա Ավգուստոսը այս երեկո ձերբակալվեցին Գամկայի մոտ: Մարի Դմիտրևա Մուբոտի-նայի անունը իմ ներկայությամբ նշեցին: Ընդհանրապես նրանք խիստ կասկածի տակ են, իսկ, կարող է պատահել, որ արդեն ձերբակալված են» [15, էջ 32; 7, թ 9]:

Նույն ոգով Ղարդաշյանը շարադրում է նշված դեպքերը Աֆոնսկուն հասցեագրված նամակում նաև [15, էջ 32]:

Այս նամակները չհասան իրենց հասցեատերերին, իսկ ժանդարմերիան կարողացավ վերծանել նամակների ծածկագրված տեքստերը և պարզել, որ իշխան Կոչակիձեի անվան տակ թաքնվում է «Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպության» անդամ Ստեփան Ղարդաշյանը: Վերջինիս նորից ենթարկեցին հարցաքննության և Ղարդաշյանը խոստովանեց, որ ինքը ներկայացել է կեղծ ազգանունով և որ այդ նամակները պետք է ուղարկվեին Օդեսա, Օրյոլ և Դրեզդեն: Ընդ որում նա հայտարարեց, որ Դրեզդեն ուղարկվելիք նամակը ոչ մի կապ չունի հետաքննության հետ:

Խուզարկության ժամանակ Ղարդաշյանից բռնագրավված նրա գրառումների գրքույկը ժանդարմերիային հնարավորություն տվեցի բացահայտելու Ղարդաշյանի դերը «Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպության» մեջ: Այսպես. Նրա գրառումների գրքույկում ուշադրություն են գրավում հետևյալ նշումներ. «Մանչո, 15 ռ, Վոլջ, 20 ռ, Գամկ, 15 ռ, հարսանիք, 42 ռ»: Այս նշումները ունեն հետևյալ պարզաբանումը: Թվարկված անունները կազմակերպության անդամների կեղծանուններն են, իսկ ինք՝ Ղարդաշյանը, կրում էր «Մալիք. Կեղծանունը: Բանն այն է, որ» «Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպությունը» իրենից ներկայացնում էր մի կոմունա, որի անդամները չունեին անձնական սեփականություն և իրենց անհրաժեշտ միջոցները ստանում էին կազմակերպության ընդհանուր դրամական ֆոնդից, որի զանձապահն էր Ղարդաշյանը, իսկ վերը նշված գրանցումները նրանց կատարած ծախսերն էին [16, էջ 188; 2, թ. 15]:

Այս առումով առանձնակի հետաքրքիր է խուզարկության ժամանակ Ղարդաշյանի մոտ հայտնաբերված 1100 ռուբլի արժողությամբ Սոֆիա Թումանովայի անունով բանկային արժետոմսը: Այս արժետոմսը վերջինս հանձնել էր իր աղջկան՝ Եկատերինային որպես ճժիտ: Եկատերինա Թումանովան ամուսնացել էր Անտիմոզա Գամկրելիձեի հետ և երկուսն էլ, լինելով կազմակերպության անդամ, այդ արժետոմսը փոխանցել էին կազմակերպության ընդհանուր ֆոնդին: Իսկ նրանց հարսանիքի ծախսերի վերաբերյալ Ղարդաշյանի գրկույկում

կային համապատասխան նշումները, ընդ որում Ղարդաշյանն ինքն էր անձամբ վճարել հոգևորականին այդ ամուսնությունը վավերացնելու համար: Այդ ամուսնությունը կրում էր ձևական բնույթ և ըստ էության նպատակ ուներ օրինական ճանապարհով ձեռք բերել Ե. Թումանովայի օժիտը և դրանով համալրել կազմակերպության ընդհանուր ֆոնդը:

Այս կապակցությամբ ուշագրավ է հետևյալ փաստը: Հարցաքննության ժամանակ որպես վկա կանչված Անսերովան և նրա հայրը, ի դեմս Ղարդաշյանի, ճանաչեցին այն անձնավորությանը, որը իրենց ներկայացել էր որպես Իոսելիանի և ամուսնության առաջարկ արել Անսերովային՝ նպատակ ունենալով ձեռք բերել նրա օժիտը և այն փոխանցել կազմակերպության ընդհանուր ֆոնդին: [16, էջ 199]:

Բանտարկվելուց հետո Ղարդաշյանը փորձում է որևէ կերպ փրկել կազմակերպությանը պատկանող դրամական միջոցները: Նա իր ցուցմունքներում հայտարարում է, որ խուզարկության ժամանակ գտնված փողերից միայն 1100 ռ. արժողությամբ Սոֆիա Թումանովայի անունով բանկային արժետոմսն է պատկանում իրեն, իսկ թե ում են պատկանում մնացած փողերը, հրաժարվում է պատասխանել: Ժանդարմերիան հարցաքննության է ենթարկում Եկատերինա Թումանովային և Անտիմոզա Գամկրելիձեին, որոնք չեն կարողանում ստույգ պատասխանել, թե ինչպես է Թումանովայի բանկային տոմսը հայտնվել Ղարդաշյանի մոտ: Հաջորդ հարցաքննության ժամանակ Ղարդաշյանը փոխում է իր ցուցմունքները հայտարարելով, որ բոլոր փողերը պատկանում են իրեն, բացի 1100 ռ. արժողությամբ բանկային արժետոմսից [15, էջ 29; 2, թ. 50, 51]:

Ժանդարմերիան կարողանում է բացահայտել այն պատճառները, որոնք ստպել են Ղարդաշյանին փոխել իր ցուցմունքները: Բանն այն է, որ վերջինս այնուամենայնիվ կարողացել էր բանտից կապ հաստատել կազմակերպության հետ և այնտեղից ուղարկել չորս նամակ, որոնք և ժանդարմերիան խուզարկության ժամանակ հայտնաբերել էր Նադեժդա Գեորգիևսկայայի և Եկատերինա Վվեդենսկայայի ընդհանուր բնակարանում: Ղարդաշյանի այդ նամակները հասցեագրված էին իր եղբայրներին՝ Բեզարին և Մերգելին և ուղարկվելու էին համապատասխանաբար Ծամախ և Ելիզավետապոլ: Այդ նամակներում Ղարդաշյանը խնդրում էր իր եղբայրներին, որ նրանք կամ մայրը հարցաքննության ժամանակ վկայություն տային, որ 9000 ռուբլին իրենք են տվել Ղարդաշյանին առևտրական գործունեություն սկսելու նպատակով: Որպեսզի նման ցուցմունքները հիմք ունենային, Ղարդաշյանը փորձել էր ուղարկել նաև հետին ամսաթվով նամակներ, որոնցում նա

հաշվետվություն էր ներկայացնում դրամական կապիտալի օգտագործման վերաբերյալ: Իսկ մեկ այլ նամակում, թվագրված 1875 թ. օգոստոսի 5-ով, Ղարղաշյանը գրում է եղբորը, որ ինքը եկել է Մոսկվա հրատարակչական գործ բացելու նպատակով, բայց գործընկերը լքել է իրեն և գործարքը չի կայացել [16, էջ 199; 2, թ 52]: Այս վերջին նամակը Ղարղաշյանի եղբայրը պետք է ներկայացներ դատարանին, որպեսզի ցույց տար, թե ինչ նպատակով է Ղարղաշյանը եկել Մոսկվա:

Բացի նշված նամակներից, ժանդարմերիան գտավ նաև երկու պարտամուրհակներ Ղարղաշյանի եղբոր՝ Բեգլարի և մոր՝ Ելիզավետա Ստեփանովնայի անուններով, որոնցից յուրաքնչուրում նշված էր միևնույն գումարը՝ 9000 ռ.: Այս նամակները և պարտամուրհակները Գեորգիևսկայայի և Վվեդենսկայայի միջոցով պետք է հանձնվեր կազմակերպության այն անդամին, որը պետք է դրանք տաներ Կովկաս: Ընդ որում մեկ այլ նամակում Ղարղաշյանը բացատրում էր, թե ինչպես կարելի է գնալ Շամախ կամ Ելիզավետապոլ եղբորը կամ մորը հանդիպելու համար: Եղբորը՝ Բեգլարին ուղղված նամակում, որում Ղարղաշյանը շարադրում է այս պլանը հետաքննությանը մոլորության մեջ զգելու նպատակով, ուշադրություն են գրավում հետևյալ տողերը. «Ենթադրում են, որ իմ մոտ եղած այդ փողերը խմբակային, այինքն հեղափոխական խմբակի ունեցվածքն է: Այժմ ամբողջ հարցը նրանումն է, որ գտնվի մի մարդ, որ համարձակվի հայտարարել, որ այդ փողերը պատկանում են իրեն. Փրկեցեք այդ փողերը, թեկուզ ձեզ համար օտար, բայց ինձ համար շատ հարազատ մարդկանց փողերը: Հատկապես այս նամակը ձեզ հանձնելու համար մարդ է ուղարկվում» [16, էջ 199; 2, թ 52]:

Ինչպես երևում է այս տողերից, Ղարղաշյանը, նպատակ ունենալով փրկել կազմակերպության փողերը, փորձում է դրանք ներկայացնել որպես իր սեփականը, կազմելով գործողությունների մի ամբողջ պլան, որը պետք է համաձայնեցներ կազմակերպության անդամների հետ: Այդ նպատակով նա կարողանում է բանտից նամակ ուղարկել, որում նա գրում է. «Ես որոշակիորեն չգիտեմ, թե ինչ կլինի հետագայում. Մեկ նոր պլան եք առաջարկում, մեկ նոր նամակ: Եթե ցանկանում եք իրագործել իմ պլանը, ապա ուղարկեցեք երկու փոստային թղթեր, շատ, շատ կարևոր է գրել նրանց, դրանք կձառայեն որպես անվիճելի ապացույցներ իմ արդարացման համար: Համենայն դեպս ձեր պլանը թղ մնա ռեզերվում, եթե դուք չեք գտնում որևէ պարոնի այնտեղ ուղարկելու համար» [16, էջ 201]:

Անկասկած է, որ «Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպությունը», բացի Ղարղաշյանի պլանից, ունեցել է մեկ այլ պլան

դրամական միջոցները փրկելու համար: Այս կապակցությամբ ուշագրավ է Գեորգիևսկայայի և Վվեդենսկայայի բնակարանում խուզարկության ժամանակ հայտնաբերված Չդանովիչի նամակը, որում վերջինս հիշեցնում է կազմակերպության անդամներին, որ «նրանց բարոյական պարտքն է ապահովել, որ առգրավված կապիտալը փրկելու համար պլանը հաջողվի, քանի որ հակառակ դեպքում կապիտալը գործի համար կորած է» [6, թ. 17]:

Կազմակերպության դրամական կապիտալը փրկելու համար եղել է նույնիսկ որոշակի ծրագիր կազմակերպելու Ղարղաշյանի, Յիցի-անովի և Անդրենի փախուստը բանտից, բայց այս ծրագիրը գործողության մեջ չի դրվել [16, էջ 320]:

Ժանդարմերիան Գեորգիևսկայայի և Վվեդենսկայայի բնակարանում կատարված խուզարկությունից հետո նորից հարցաքննության է ենթարկում Ղարղաշյանին: Նա խոստովանում է, որ վերը նշված նամակների հեղինակը իրոք ինքն է, սակայն այս կապակցությամբ հրաժարվում է տալ որևէ բացատրություն: Իսկ ինչ վերաբերվում է նրա գրառումների գրքույկում նշված դրամական ծախսերին և «Գամկ», «Սանչո» և «Վոլչոնոկ» մականուններին, ապա Ղարղաշյանը ժանդարմերիային հայտարարեց, որ ինքը դրանց տակ նկատի ուներ Գամկրելիձեին, իշխան Յցիանովին և Վերա Լյուբատովիչին, որոնց ինքը փող է տվել, բայց պարտքով: [6, թ. 17]: Դրանով իսկ Ղարղաշյանը փորձում էր ժանդարմերիային համոզել, որ այդ փողերը պատկանում են իրեն և չ մի առնչություն չունեն հեղափոխական կազմակերպության հետ: Սակայն խուզարկության ժամանակ հայտնաբերված Ղարղաշյանի նամակները, որոնցում շարադրված էր կազմակերպության դրամական միջոցները փրկելու պլանը, ինչպես նաև հետաքննության արդյունքում ձեռք բերված մյուս փաստերը ժանդարմերիայի մոտ ոչ մի կասկած չեն թողնում այն մասին, որ Ղարղաշյանից առգրավված դրամական միջոցները նրա անձնական սեփականությունը չեն, այլ պատկանում են «Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպությանը»: Այս մասին շատ հստակ նշված է դատաքննչական նյութերում, որոնցում շեշտվում է, որ «բոլոր վերը նշված փաստերի և անունների փոխադարձ համատեղումը բերում են այն վերջնական համոզման, որ Ղարղաշյանի ձեռքում էր գտնվում Մոսկովյան հեղափոխական խմբակի Փոնդը, իսկ ինքը՝ Ղարղաշյանը, հանդիսանում էր այդ խմբակի գանձապահը» [2, թ. 14]:

Այնուհանդերձ Ղարղաշյանը չի հրաժարվում կազմակերպության դրամական միջոցները փրկելու փորձերից և դատական պրոցեսի ժամանակ բողոք է հայտնում իրենից առգրավված

գումարը պետական գանձարանի օգտին փոխանցելու համար պնդելով, որ դրա համար չկա որևէ իրավական հիմք: Այս մտտեցումը հիմնավորելու համար նա հայտարարում է, որ ինքը այդ գումարը ձեռք է բերել իրեն հասանելիք ժառանգությունից: Այս հայտարարության կապակցությամբ Մոսկվայի նահանգային ժանդարմական վարչությունը հարցումով դիմում է Ելիզավետպոլի գավառական դատարանին: Ելիզավետպոլի գավառական դատարանը մանրամասն հաշվառման է ենթարկում Ստեփան և Բեգլար Ղարդաշյաններին հասանելիք ժառանգությունը և պարզում, որ երկու եղբայրներին հասանելիք ժառանգության անշարժ և շարժական գույքի գումարը կազմում է 2400 ռ., որից 1214 ռ. է միայն պատկանում Ստեփան Ղարդաշյանին [2, թ. 14]:

Այս վերջին ճշտգրտումը, ինչպես նաև այն փաստը, որ «նշված դրամական գումարը, ինչպես պարզել է դատաքննչական պրոցեսը, պատկանել է Ղարդաշյանի և ուրիշ անձանց կողմից կազմված հակաօրինական ընկերությանը, այսինքն ձեռք են բերվել հանցագործ ճանապարհով, դատարանին բերում են այն համոզման, որ Ղարդաշյանի բողոքը այս կապակցությամբ չի կարող արժանանալ հարգանքի» [11, թ. 18]:

Այսպիսով Ղարդաշյանի բոլոր փորձերը, փրկելու «Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպության» դրամական միջոցները, ի դերև եղան:

Դատաքննչական նյութերում, ըստ կատարված հանցագործության բնույթի, կազմակերպության անդամները բաժանվում են երկու հիմնական խմբերի: Առաջին խմբի մեջ նտնում են կազմակերպության հիմնադիր անդամները, իսկ երկրորդ խմբում այն անդամները, որոնք մեղադրվում են պրոպագանդիստական ակտիվ գործունեության մեջ: Ղարդաշյանը ընդգրկված էր թե առաջին և թե երկրորդ խմբում [11, թ. 21]: Սա վկայում էր, որ Ղարդաշյանը դիտվում էր որպես «Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպության» հիմնադիրներից և ակտիվ գործիչներից: Այդ պատճառով դատարանը նրան, ինչպես նաև Ջաբադարուն, Գամկրելիձեին, և Ցիցիանովին դատապարտում է հինգ տարվա բանտարկության: Ընդ որում շեշտվում էր, որ «այս դատավճիռը առաջին հերթին պետք է կիրառվի Ղարդաշյանի, Ջաբադարուն, Չեկոիձեի, Բարդիմայի և Ցիցիանովի նկատմամբ» [11, թ. 28]:

Բանտարկության հիմնական ժամկետը և տաժանակիր աշխատանքը Ղարդաշյանը կրեց նախ Խարկովում, ապա Իրկուտսկում [13, թ. 4]: Ուշագրավ է, որ պատժաժամկետը կրելու ընթացքում նույնպես նա ցուցաբերում է

որոշակի ակտիվություն: Այսպես, 1880 թ.-ով թվագրված Խարկովի նահանգապետության արխիվային գործերում պահպանվել է մի հետաքրքիր փաստաթուղթ, որը, հավանական է, պատկանել է նահանգապետի քարտուղարին: Վերջինս 1880 թ. - օգոստոսին այցելել է Խարկովի նահանգի Նովո-Բելգորոդցկի բանտը, որտեղ իր պատժաժամկետն էր կրում Ղարդաշյանը: Նահանգապետի քարտուղարը իր այցելության մասին մի փաստաթուղթ է թողել, որում մասնավորապես նշված է, «քաղբանտարկյալների հայտարարությունը ա) որպեսզի գրոսանքի ժամանակ իրենց թույլ տրվի կատարելու որևէ աշխատանք. բ) որպեսզի երեկոյան թույլ տրվեր իրենց խցիկում ունենային լամպեր՝ ընթերցանության համար. գ) թույլ տան իրենց խցիկում ունենալ թեկուզ հին թերթեր և հանդեսներ. դ) Ալեքսանդրով, Մտուրինսկին և Ղարդաշյանը ցանկանում են, որպեսզի իրենց նշանակեն վարպետներ կամ թույլ տան աշխատելու բանտի արհեստանոցներում. ե) բողոքը խնդրում են թույլտվություն կարդալ թերթեր և ամսագրեր» [24, էջ 102]:

Այս պահանջներ տակ կար նաև Ղարդաշյանի ստորագրությունը: Այս փաստաթուղթը վկայում էր, թե ինչպիսի պայմաններում էին իրենց պատժաժամկետը կրում թե Ղարդաշյանը և թե մյուս քաղբանտարկյալները: Իսկ նահանգապետի քարտուղարը ոչ մի ուշադրություն չդարձրեց վերը նշված խնդրանքներին:

1878 թ. Ղարդաշյանի մայրը խնդրանքով դիմում է կառավարությանը, այն է՝ որդու բանտարկությունը փոխարինել ռազմական ծառայությամբ: Սակայն նույն թվականի հունիսի 23-ին այդ խնդրանքը մերժվում է [22, էջ 544]:

Մինչև 1878 թ.-ի հոկտեմբերը Ղարդաշյանը մնաց Նովո-Բելգորոդցկի բանտում, իսկ այնուհետև նրան տեղափոխեցին Մեշենսկի բանտը, որտեղ Ղարդաշյանը կրեց իր պատժաժամկետը մինչև 1881 թ.-ը: Պատժաժամկետի մնացած մասը Ղարդաշյանը անցկացրեց Կառում: 1883 թ.-ից հետո Ղարդաշյանը որպես արքայական բնակվում է Անդրբայկալյան երկրամասի Տոբոլսկի նահանգում, որտեղ մնում է մինչև 1904 թ.: Փաստացի 25 տարի արքայավայրերում մնալուց հետո միայն նրան թույլատրվում է վերադառնալ հայրենիք: Ղարդաշյանը ցանկանում է աշխատել Բաքվում, բայց հավանաբար հաշվի առնելով, որ Բաքուն հեղափոխական շարժումների ակտիվ ճգնաժամներից է, նրա այս խնդրանքը մերժվում է և Ղարդաշյանին աշխատանքի են նշանակում Մուղանի տափաստանում իբրև երկաթուղային ինժիներ: Ղարդաշյանը իր մահկանացուն կնքեց 1918 թ. [22, էջ 545]:

«Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպության մյուս հայազգի անդամը Ե. Թումանովան դատարանի վճռով 1879 թ. փետր-

վարի 20-ին մեղավոր ճանաչվեց հանցագործ խմբակի աշխատանքներին մասնակցելու մեջ և դատապարտվեց վեց շաբաթյա բանտարկության: Պատիժը կրելուց հետո Ռուսմանովան բնակություն հաստատեց Պետերբուրգում և շարունակեց ակտիվ հեղափոխական գործունեությունը: Ըստ Ժանդարմերիայի տեղեկությունների, նրա բնակարանը Պետերբուրգում դարձավ ուսանողական հավաքների կենտրոն: Թումանովայի բնակարանն էր հաճախակի այցելում նաև նախկին քաղաքատարկյալ, արտոյից փախած Վասիլի Սիդորրացկին: Բացի այդ, ըստ Գոլդենբերգի ցուցմունքների, «Թումանովան հավանական ինչ-որ առնչություններ է ունեցել Ժանդարմերիայի նախկին շեֆ, գեներալ-ադյուտանտ Մեզենցևի դեմ կազմակերպված տեռորիստական ակտի հետ, քանի որ 1878 թ.-ի օգոստոսի 4-ին նա է առաջինը Գոլդենբերգին հայտնել Մեզենցևի սպանության մասին» [12, թ. 1]:

1878 թ.-ի աշնանը Թումանովան անձնական մասնակցություն ունեցավ նաև Խարկովի բանտից Մեդվեդևա-Ֆոմինին ազատելու փորձում: Նա Սենայանինի և Սարանովիչի հետ բնակություն հաստատեց այն բնակարանում, որտեղից նրանք փորում էին ստորգետնյա ուղի դեպի բանտը: Բայց Սենայանինի ձերբակալությունից հետո Թումանովան հարկադրված հեռացավ Խարկովից [21, էջ 1761]:

1878 թ.-ի աշնանը Թումանովան, առանց թույլտվության, մեկնեց արտասահման: 1886 թ.-ի ամռանը նա խնդրանքով դիմեց Ռուսական կառավարությանը՝ վերադառնալ հայրենիք և բնակվել մոր մոտ՝ Թեոդոսիայում: Բարձրագույն հրամանով 1886 թ.-ի օգոստոսի 14-ին Թումանովային թույլատրվում է վերադառնալ հայրենիք պայմանով, որ նա ենթարկվի ոստիկանության հատուկ հրապարակային հսկողությանը երեք տարի ժամկետով [12, թ. 2]: Համաձայնվելով այս պայմանին, Թումանովան վերադառնում է Թեոդոսիա և 1886 թ.-ի հոկտեմբերի 11-ից արդեն ենթարկվում է ոստիկանության հրապարակային հսկողությանը մինչև 1889 թ.: Նույն թվականի ապրիլին նա դիմում է խնդրանքով, որպեսզի, նկատի ունենալով իր առողջական վատ վիճակը և ընտանեական հանգամանքները, ազատեն իրեն ոստիկանության հսկողությունից և թույլատրեն մեկնելու արտասահման: Նրա այս խնդրանքը մերժվում է: 1889 թ.-ի հուլիսին Թումանովան նորից է դիմում նույն խնդրանքով, բայց կրկին մերժում է ստանում:

1889 թ.-ի հոկտեմբերի 11-ին Ե. Թումանովան ազատվում է ոստիկանության հրապարակային հսկողությունից և ենթարկվում ոչ հրապարակային հսկողության: Դրանից հետո 1891 թ. ապրիլին նա այնուամենայնիվ, ստա-

նալով թույլտվություն, մեկնում է արտասահման: Այստեղ նա ամուսնանում է Չելենսկու հետ և նույն թվականին վերադառնում է Թեոդոսիա, որտեղ և բնակվում է մինչև 1900-ական թվականները: 1903 թ. մարտին միայն ժանդարմերիան ազատում է Թումանովային ոչ հրապարակային հսկողությունից: Հայտնի է, որ մինչև 1923 թ. Թումանովան բնակվել է Ռուսաստանի հարավում [21, թ. 1762]:

«Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպության գործունեությանը մասնակցել է նաև Ե. Թումանովայի Բույրը՝ Հռիփսիմեն: Նա ավարտելով Թեոդոսիայի և Օդեսայի գիմնազիաները և 1870 թ. ընդունվել է Յյուրիխի համալսարանի փիլիսոփայության բաժինը: Հ. Թումանովան, այս շրջանում շփվելով ռուս էմիգրանտների հետ, ներգրավվում է հեղափոխական գործունեության մեջ, հրաժարվելով միառժամանակ վերադառնալ Ռուսաստան և դրանով անտեսելով կառավարության պահանջը հեռոտարձի մասին: Այնուհանդերձ 1875 թ. վերջերին «Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպության» մի շարք անդամների հետ վերադառնում է հայրենիք, իսկ 1876 թ տեղափոխվում Մոսկվա [21, թ. 1762]: Ձևականորեն Հ. Թումանովան ամուսնացած էր Ժելատինսկու հետ, կազմակերպությանը նյութապես օգնելու նպատակով, բայց իրականում նա Ս. Ղարդաշյանի նշանածն էր: Նա խնդրանքով դիմում է իշխանություններին՝ Ս. Ղարդաշյանի հետ ամուսնության թույլտվության համար, սակայն մերժում է ստանում: 1879 թ. Հ. Թումանովան մասնակցում է Խարկովի նահանգի Նովոբելգորոյան բանտից Ստ. Ղարդաշյանի, Պ. Ալեքսենի և մյուս քաղաքատարկյալների փախուստի կազմակերպմանը և սա պատճառ է հանդիսանում, որ Խարկովից նրան արքայազն Սիրբիր՝ Իրկուտսկի նահանգ: Այս կապակցությամբ «Նարոդնայա Վոյա» կազմակերպության համանուն օրգանը գրեց, որ «1879 թ. հուլիսի 24-ին վարչական կարգով Արևելյան Սիրբիր է արքայազն Հ. Թումանովան՝ «50-ի պրոցեսով» դատապարտված Ե. Թումանովայի քույրը: Խուզարկության ժամանակ նրա մոտ ոչինչ չի գտնվել: Այնուամենայնիվ նրան ուղարկում էին հեռավոր արքայ միայն նրա համար, որ լինելով կենտրոնական բանտում նստած Ղարդաշյանի հարսնացուն, նա աշխատում էր նրա հետ տեսակցության իրավունք ստանալ» [14, էջ 18]: Հ. Թումանովան մահացավ 1882 թ.-ի հունվարի 20-ին Իրկուտսկի նահանգում [21, թ. 1762]:

Օգտագործված սկզբաղբյուրների և գրականության ցանկ

1. Российский государственный исторический архив (РГИА), ф. 109, оп. 1874 г., д. 144, ч. 127,
2. РГИА, ф. 112, оп. 1, д. 142,

3. РГИА, ф. 112, оп. 1, д. 115,
4. РГИА, ф. 112, оп. 1, д. 160.
5. РГИА, ф. 112, оп. 1, д. 155.
6. РГИА, ф. 112, оп. 2, д. 203,
7. РГИА, ф. 112, оп. 2, д. 230,
8. РГИА, ф. 112, оп. 2, д. 232,
9. РГИА, ф. 112, оп. 2, д. 264,
10. РГИА, ф. 112, оп.1, д. 2833,
11. РГИА, ф. 144, оп. 1874, д. 144, ч. 127, т. 1.
12. Государственный архив Российской Федерации (ГА РФ), ф. 102, 3-е дво, оп. 1886, д. 885.
13. Центральный государственный исторический архив Санкт-Петербурга (ЦГИА СПб), ф. 14, оп. 1, д. 10695
14. Литература партии «Народная Воля».
15. «Процесс 50-ти». – М. 1906.
16. Государственные преступления в России в 19 веке. // Сборник из политических процессов и других материалов относящихся к истории революционных оппозиционных движения в России. Сост. под. ред. Б. Базилевского. – Штутгарт, 1904.
17. **Հովսեփյան Ս., Թումանյան Մ.**, Նոր փաստաթղթեր հայ նարողնիկների մասին // «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, № 3:
18. **Պարսամյան Վ.**, Նոր նյութեր Ցյուրիխի Կովկասի ուսանողների խմբակի մասին // ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1964, № 2:
19. **Ղևոնդյան Հ.**, Հեղափոխական նարողնիկական շարժումը հայ իրականության մեջ XIX դարի 70-80-ական թվականներին: - Եր. 1991:
20. **Ներսիսյան Մ.**, Նարողնիկական խմբակներն Անդրկովկասում: - Եր. 1940:
21. Деятели революционного движения в России, Библиографический словарь, т. 2, ч. 2. сост. А. А. Шиловим и Корноуховой М. Г.. – М. 1928.
22. Деятели революционного движения в России, Библиографический словарь, вып. 2, т. 2, сост. А. А. Шиловим и Корноуховой М. Г. – М. 1930.
23. История классовой борьбы в Закавказье. Кн. 1. – Тифлис, 1930.
24. «193» (как с ним расправились). – Харьков, 1928.
25. **Джабадари И. И.** Процесс пядесяти // «Былое», 1907, № 10.

Տճանա/Հանձնվել է՝ 13.11.2023

Րեցենզирована/Գրախոսվել է՝ 27.11.2023

Принята/Ընդունվել է՝ 04.12.2023